

Կ'երեւի թէ Խօջայ Ֆռանդուլի կիւնը, որ կը վախճանի 1636ին, կրկին անուեններ ունեցած է. կամ ալ առաջին կիւնը՝ Բարէն մեռնելուն, 1621ի տտենները, Խօջայ Ֆռանդուլ կրկին անգամ ամուսնացած է Խարչիկ անունով «քաջազգի տոհմէ» կնոջ մը հետ: Նոր Զուղայի գերեզմանատունը ուրիշ տապանաքար մըն ալ կայ «Խաթուն Բարէ» արձանագրութեամբ:

Աճառեան, իր «Անձնանունների Բառարան»ին մէջ, Բար կամ այդ արմատով կազմուած անունները «արական» նշանակած է. մինչ մեր վերոյիշեալ 1621ի Յիշատակարանին մէջ յայտնի կերպով գրուած էր՝ «գիտօջայ Ֆռանդուլն եւ գկոդակիցն իւր Բարէն»:

ԽՕԶԱՅ ՍՈՒԼԹԱՆ կամ ՍՈՒԼԹԱՆՈՒՄ

Խօջայ Սաֆարի երրորդ որդին էր Խօջայ Սուլթան: Ինքն ալ կը յիշուի իր պապուն՝ Խօջայ Խաչիկի Յայտաւուրքին մէջ, 1604ին, Հին Զուղայ: Դժբախտաբար, իր մասին բան մը չեմ գիտեր. նոյնիսկ իր կնոջ անունը կը մնայ անծանօթ: Իր եղբոր՝ Զալալ Բէկի Յիշատակարանին մէջ (Թիւ 477 Զեռագիր) կը յիշուի «խօջայ Սուլթանն քաղապիւն»... «Այլ եւ որդիք Սուլթանուսին՝ Սաֆար, Վալաքն ընդ Լէլուսին»:

Գուցէ իր որդին Սաֆար, Խօջայ Սաֆար ինքն ալ, նոյն անձն է Վենետիկի թիւ 1240 Սաղմոսարանին ստացող Խօջայ Սաֆարին հետ, որ 1646ին գներ է ձեռագիրը Տէր Խաչատուր երէցէն՝ իր Մովսէս որդւոյն համար 9 ուշալի¹⁹: Թերեւս նոյն է ստացողը նաեւ Երուսաղէմի թիւ 1934 Աստուածաշունչին, որ ձեռագիր մըն է Ստեփանոս գրչէն, 1641-1646ին²⁰:

1972ին, Նոր Զուղայի գերեզմանատունը գտայ Խօջայ Սուլթանումի տապանաքարը, որու արձանագրութեան համաձայն՝ մեռած է 1632ին, հազիւ 39 տարեկան. ուրեմն՝ ծնած է 1593ին, Հին Զուղայ: Ահա՛ տապանագիրը.

«Այս է տապան Սուլթանուսին, հաննարաշատ մեծ պ(ա)րոնին, Սայ է որդի մեծ խօջային, որոյ անուն Սաֆար կոչի. Սայ էր ամաց երսուն եւ Թ (9)նին, ազնիւ տեսլեամբ գեղեցկագին, Թ(վին) ՌՁԱ. (1632) սա փոխեցօ յաշխարհ վերին, Յորժամ որ գայ տ(է)րն երկնային, նայի սիրով յանձն սորին. Լսել տացէ՛ ձայնն երանին»:

19. Հ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳԻՍԵԱՆ, Մայր Յուցակ Հայերէն Զեռագրաց Մատենադարանին Միփարբեանց ի վեներիկ, հտ. Ա. Վենետիկ, Ս. Ղազար 1914, սիւն 281-282 Զեռագիր Ն. Թիւ 57, Սաղմոսարան ԼԳ.:

20. ՆՈՐԱՅՐ ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ, Մայր Յուցակ Զեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Զ. Երուսաղէմ, 1972, էջ 461-469: